

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 35

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

17.12.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Խաչատրյանը - մարզպետի տեղակալ
- Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Հովսեփյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ն.Ասրյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ս.Խառատյանը, Ն.Մանուկյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Հ.Հակոբյանը, Ս.Ղուբաթյանը, Ա.Եղիազարյանը, Հ.Մկրտչյանը, Կ.Խառատյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
- Լ.Տեր-Սիմոնյանը -մարզպետի խորհրդական
- Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ`

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Զեկ. մարզպետի տեղակալներ,
գլխավոր քարտուղարի տեղակալ,
ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ս.Սարուխանյանին, Ա.Հովսեփյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին և ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`

Անհրաժեշտ հսկողություն սահմանել համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման տարեկան պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝

Անհրաժեշտ ուշադրություն դարձնել տրված բանավոր և գրավոր հանձնարարականների սահմանված կարգով և ժամկետներում կատարմանը:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Ս.Ղուբայանին, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Ա.Մխիթարյանին՝

Հնարավորինս սեղմ ժամկետներում ներկայացնել տեղեկատվություն ապրիլյան պատերազմի զոհերի և մարզի բազմազավակ (6 և ավելի երեխա ունեցող) ընտանիքների վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա. Զանազյանին՝

ա/ Անհրաժեշտ հսկողություն սահմանել ճանապարհաշինական կազմակերպությունների կողմից ճանապարհների ձմեռային պահպանման միջոցառումների պատշաճ իրականացման ընթացքի նկատմամբ.

բ/ Ներկայացնել առաջարկություններ շինարարական օբյեկտների այցելությունների վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին՝

Կայանատեղիների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով դիմել համայնքների ղեկավարներին, տեղեկատվությունն ստանալուց հետո քննարկել և ներկայացնել առաջարկություններ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Ա.Մխիթարյանին՝

Քննարկել և ներկայացնել առաջարկություններ պետպատվերով ուղեգրող հանձնաժողովների կազմերի վերաբերյալ:

7. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝

Ամենօրյա աշխատանքներ իրականացնել նախատեսվող բիզնես-ֆորումի անցկացման ուղղությամբ և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

12/17/2018

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ